# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է իր կարիքների համար ՀՀ Տավուշի մարզի Կիրանցի Գ. Վարդանյանի անվան հիմնական դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/9 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2021 թվականի հուլիսի 20-ին կնքված N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/9-3 գնման պայմանագրում 2023 թվականի դեկտեմբերի 20-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

| | |
|---|---|
| Փոփոխության առաջացման պատճառ | ՀՀ կառավարության 14.12.2023թ. N2202-Ն որոշում: |
| Փոփոխության նկարագրություն | 2023թ. աշխատանքների կատարման համար տրամադրված ֆինանսական միջոցների նվազեցում, վճարման ժամանակացույցի և օրացուցային գրաֆիկի փոփոխություն: |
| Փոփոխության հիմնավորում | Պայմանագրի 8.5 և 8.8 կետեր: |

Պատվիրատու՝ *ՀՀ քաղաքաշինության կոմիտե*

**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 9**
**20.07.2021թ. կնքված N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/9-3 գնման պայմանագրի**

ք. Երևան «20» «12» 2023թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<Ինտերեվրոս-Արգոս>> ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կապալառու), ի դեմս տնօրեն Գ. Ղազարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով ՀՀ կառավարության 14.12.2023թ. N 2202-Ն որոշումը և ՀՀ Տավուշի մարզի Կիրանցի Գ. Վարդանյանի անվան հիմնական դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքների կատարման համար Կողմերի միջև 20.07.2021թ. կնքված ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/9-3 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.8 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

**1. Համաձայնագրի առարկան**

1.1 Կողմերը որոշեցին՝ Պայմանագրի 2023 թվականի օրացուցային գրաֆիկը և վճարման (ֆինանսական պարտավորությունների կատարման) ժամանակացույցը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն Համաձայնագրի N 1 և N 2 հավելվածների:

**2. Այլ պայմաններ**

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը և Համաձայնագրի N 1 և N 2 հավելվածները կազմված են մեկական էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի N 1 և N 2 հավելվածները համարվում են Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

**3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| | |
|---|---|
| **ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝** | **ԿԱՊԱԼԱՌՈՒ՝** |
| ՀՀ քաղաքաշինության կոմիտե | <<Ինտերեվրոս-Արգոս>> ՍՊԸ |
| ք. Երևան, Հանրապետության հրապարակ կառավարական տուն 3 | ք. Երևան, Ավան Թումանյան 3/10 |
| ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն | <<Հայէկոնոմբանկ>> ԲԲԸ |
| Հ/Հ 900011023745 | Հ/Հ 163028087761 |
| ՀՎՀՀ 02565827 | ՀՎՀՀ 02245698 |
| Գլխավոր քարտուղար՝ | Տնօրեն՝ |
| ______ Ա. Մկրտչյան (ստորագրություն) | ______ Գ. Ղազարյան (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Հավելված N 1
20.07.2021թ. կնքված
N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/9-3 պայմանագրի
20 . 12 .2023թ. կնքված N 9 համաձայնագրի

<<Հավելված N 3
20.07.2021թ. կնքված
N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/9-3 պայմանագրի

**ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ**

ՀՀ Տավուշի մարզի Կիրանցի Գ. Վարդանյանի անվան հիմնական դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման 2023թ. վճարման (ֆինանսական պարտավորությունների կատարման) ժամանակացույցով նախատեսված ֆինանսական միջոցների շրջանակներում կատարվելիք աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ

| N | Գումարը (ՀՀ դրամ) աճողական | Կատարվելիք աշխատանքների ներկայացման վերջնաժամկետը |
|---|---|---|
| 1 | 32 914 300 | 31.03.2023թ. |
| 2 | 65 828 700 | 30.06.2023թ. |
| 3 | 131 657 600 | 15.08.2023թ. |
| 4 | 263 524 200 | 10.12.2023թ. |

>>:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝**
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011023745
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝
_______________ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՊԱԼԱՌՈՒ՝**
<<Ինտերեվրոս-Արգոս>> ՍՊԸ
ք. Երևան, Ավան Թումանյան 3/10
<<Հայէկոնոմբանկ>> ԲԲԸ
Հ/Հ 163028087761
ՀՎՀՀ 02245698

Տնօրեն՝
_______________ Գ. Ղազարյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
20.07.2021թ. կնքված
N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/9-3 գնման պայմանագրի
20 . 12 . 2023թ. կնքված N 9 համաձայնագրի

<<Հավելված N 2
20.07.2021թ. կնքված
N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/9-3 գնման պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | Մինչև 2022թ. վճարված գումար | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | | |
| | | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 45211231/19 | ՀՀ Տավուշի մարզի Կիրանցի Գ. Վարդանյանի անվան հիմնական դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքներ | 290 354 300 | - | - | 32 914 300 | 65 828 700 | 65 828 700 | 65 828 700 | 131 657 600 | 131 657 600 | 131 657 600 | 263 524 200 | 263 524 200 | 263 524 200 | 263 524 200 |

**Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:>>:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝**
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011023745
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

_____________ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)

Կ.Տ.

**ԿԱՊԱԼԱՌՈՒ՝**
<<Ինտերեվրոս-Արգոս>> ՍՊԸ
ք. Երևան, Ավան Թումանյան 3/10
<<Հայէկոնոմբանկ>> ԲԲԸ
Հ/Հ 163028087761
ՀՎՀՀ 02245698

Տնօրեն՝

_____________ Գ. Ղազարյան
(ստորագրություն)

Կ.Տ.